ԱՂԱՅԱՆԻ ՕՐԸ ԲՈԼՆԻՍ - ԽԱՉԵՆՈՒՄ

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷԼ ՍԵՎ-ՍԵՎ ԱՄՊԵՐԸ ՃԱՄՓԱ ՏՎԻՆ ՁԻՁԻ ՔԱՐԻՆ ՎԵՐ ԵԿԱԾ ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎԻՆ

...Ու նորից Բոլնիս-Խաչենում, խաչենցիների հետ միասին, Թբիլիսիից, Երեւանից ու Վրաստանի տարբեր անկյուններից ժամանած հյուրերը ծաղիկներով պատեցին 1963 թ. Ղազարոս Աղայանի (1840-1911) տուն-թանգարանի մոտ տեղադրված կիսանդրին: Ձիզի քարի հենց ստորոտին, գյուղի ամենաառաջին, 250-ամյա տան բակում, խոսքով, երգով, բանաստեղծությամբ ու պարով նորից մեծարվեց հատկապես մանկագրության ու մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության մեջ իր երեւելի հետքը թողած հայ մեծ Դասականը, ում ուղին Բոլնիս-Խաչենից ծգվեց Թիֆլիս (հուղարկավորված է Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում)՝ գրաշար բանվորից մինչեւ մեծ Գրող ու մեծ Մանկավարժ:

Այս տարի նույնպես բազմամարդ էր Աղայանական հանդեսը: Եղանակն էլ՝ արտասովոր ու կախարդական, որովհետեւ կանխատեսվող անձրեւը համբերատար սպասում էր՝ ուշիմ գրողի ամենահայտնի տողերին՝ ***«Արեւ արեւ եկ, եկ/Ձիզի քարին վե՞ր եկ,/Սեւ-սեւ ամպեր հեռացեք,/Արեւին ճամփա տրվեք»*** ու ցրում սեւ-սեւ ամպերը:

Բացելով ավանդական տոնախմբությունը՝ «Վերնատան» վարչության անդամ, թբիլիսցի վաստակաշատ մանկավարժ Ռոզա Զոհրաբյանը միջոցառումն իրականացնելու համար հատուկ շնորհակալություն հայտնեց Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետ Դավիթ Շերազադիշվիլիին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Տ.Կիրակոս վարդապետ Դավթյանին եւ թբիլիսցի բարերար Ալեքսանդր Ութմազյանին:

Աղայանի մասին խոսքով հանդես եկան Բոլնիսիի քաղաքապետ Դավիթ Շերազադիշվիլին, Բոլնիսիի մունիցիպալիտետի մշակութի կենտրոնի տնօրեն Սոսո Կոպալեիշվիլին, Բոլնիս-Խաչենի գյուղապետ Արմեն Հարությունյանը, Վրաստանի գրողների միության համանախագահ Բաղաթեր Արաբուլին, գրող, բանաստեղծ Թամար Գաբրոշվիլին, Ղ.Աղայանի տուն-թանգարանի տնօրեն Արթուր Պետրոսյանը, Վիրահայոց թեմի Քվեմո Քարթլիի Շահումյան, Կարմիրգյուղ եւ Աղքորփի գյուղերի հոգեւոր հովիվ Տ. Զավեն վարդապետ Յազիչյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, վաստակավոր դերասանուհի Մելանյա Բարսեղյանը, բանաստեղծուհի Լուսինե Վանոյանը, «Արեւիկ» ամսաթերթի գլխավոր խմբագիր Էմմա Ախտյանը, «Միասին» հասարակական կազմակերպության նախագահ Լեւոն Չիդիլյանը, Բոլնիս-Խաչենի հանրային դպրոցի տնօրեն Հրանուշ Խուբլարյանը, Երեւանից ժամանած «Բոլնիս-Խաչեն» միության նախագահ Ավետիք Ոսկանյանը, Երեւանի Խ.Աբովյանի պետական մանկավարժական համալսարանի դոցենտ Քնարիկ Աբրահամյանը: Ներկաների թվում էին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, Թբիլիսիի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը, մանկավարժ Մանանա Կարապետյանը, ճանաչված տիկնիկագործ Արմեն Հովհաննիսյանը, հասարակական, մշակութային գործիչներ:

Միջոցառմանն իր մասնակցությունն էր բերել Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Լեւոն Զարգարյանը:

Տոնախմբության գեղարվեստական մասը, որին մասնակցեցին «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի պարի (ղեկ.՝ Ս.Աբրահամյան) եւ ժող.գործիքների (ղեկ.՝ Վանո Մկրտչյան) ստեղծագործական խմբերը, մեներգչուհի Աննա Բաղալյանը, Ախալքալաքիի երիտասարդության եւ կրթության կենտրոնի «Հայք» համույթը (ղեկ.՝ Կարինե Թադեւոսյան), տեղի դպրոցի սաները, վարեց Թբիլիսիի «Հայարտան» եւ «Թումանյանի տան» աշխատակցուհի Գոհար Մազմանյանը:

Աղայանի ծննդավայրը՝ Վրաստանի գեղատեսիլ ու կանաչազարդ գյուղը, նորից էր վայելում նախ՝ իրեն վերապահված անվանի զավակի համար հպարտությունը ու նորից էր վեր հանում մշտապես արթուն ու արդի Դասականի խոսքը, իսկ երկնակամարում շարունակում էր սավառնել Աղայանի բարի ու լուսառատ հոգին:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

Հ.Գ. Աղայանական օրվա հիմնադրման տարեթվի վերաբերյալ վրացական ու հայկական ՁԼՄ-ներում տեղ գտած լուսաբանումների հետ կապված «Վրաստան» թերթի խմբագրությունն զանգահարեցին Բոլնիս-Խաչենի տարեց բնակիչներն ու խնդրեցին հրապարակել տոնի իրական ժամանակագրությունը: Ըստ վերջինների, որոնցից ի դեպ շատերն անձամբ են մասնակցել միջոցառման կազմակերպչական աշխատանքներին, տոնն առաջին անգամ նշվել է Դասականի ծննդյան 100-ամյակին՝ 1940թ., իսկ 1963 թ. նրա տան մոտ տեղադրված գրողի կիսանդրին համախմբել է Հայաստանից ու Թբիլիսիից ժամանած մշակույթի ու հասարակական գործիչների: Այդ օրվանից թերեւս յուրաքանչյուր տարի Վրաստանի ու Հայաստանի գրողների, Վրաստանի մշակույթի նախարարության, տեղի իշխանության մասնակցությամբ, գյուղը տոնել է Աղայանական օրը: Իսկ 2000 թվականից միջոցառման պաշտոնական մասի եւ համերգային ծրագրի նախաձեռնողը, տեղի իշխանությունների մշտական աջակցությամբ, դարձել է Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը:

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏ. ՆՈՐՈՒՅԹՆԵՐ

ԱՎՏՈԿԱՅԱՐԱՆՆԵՐԸ ԿՎԵՐԱՆՈՐՈԳՎԵՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին՝ երկրի կառավարությունն օրենսդրական նախաձեռնությամբ դիմել է խորհրդարան: Օրինանախագիծը նախատեսում է Վրաստանում մոտակա ժամանակներում գործող ավտոկայարանների վերանորոգում եւ արդիականացում:

Նշենք, որ դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին նշել էր, որ մշակվել է օրինանախագիծ, որը վերաբերում է միջազգային տրանսպորտի ավտոկայարանների եւ ավտոկանգառների գործունեության կարգավորմանը:

Հիշեցնենք, որ ներկա դրությամբ քաղաքների եւ գյուղերի միջեւ ուղեւորափոխադրումներն ու բեռնափոխադրումներն իրականացնում են մասնավոր ընկերությունները, որոնք գործում են իրենց կողմից մշակված ժամանակացույցով, եւ իրենք էլ ընտրում են կանգառի վայրերը:

ՏԱՔՍԻՆԵՐԸ ԿԵՐԹԵՎԵԿԵՆ ԱՎՏՈԲՈՒՍԻ ԳՈՏՈՒՄ

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձեն՝ Թբիլիսիում «Ա» կատեգորիայի տաքսիները, որոնց տարիքը չի գերազանցում 10 տարին, հունիսի 1-ից կկարողանան երթեւեկել ավտոբուսի գոտում:

Քաղաքապետի խոսքով, հարկային բարեփոխումների շրջանակներում, մի շարք կոնկրետ քայլեր են ձեռնարկվել, մասնավորապես, մինչ այս, նշված գոտում տաքսիները կարող էին միայն ուղեւոր վերցնել կամ իջեցնել:

Նրա խոսքով, այս տարվա մայիսից, քաղաքային սպասարկման կենտրոններում կբաժանվեն, այսպես կոչված, կպչուն պիտակներ «Ա» կատեգորիայի այն տաքսիների համար, որոնց թույլատրված է երթեւեկել ավտոբուսի գոտում:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐՆ ԱՎԵԼԱՑՎԵԼ ԵՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ...

Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ՝ 77 կողմ ձայնով, ընդունել է «Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքում» նախաձեռնված փոփոխությունը, որը նախատեսում է տուգանքների կիրառում այն տրանսպորտային միջոցների համար, որոնց արտանետումների մեջ վնասակար նյութերի պարունակությունը գերազանցում է սահմանված նորմերը:

Ըստ այդ փոփոխության՝ տրանսպորտային միջոց վարելու համար, որի արտանետումներում վնասակար նյութերի բաղադրությունը չի համապատասխանում սահմանված նորմերին, տրանսպորտային միջոցի վարորդը կտուգանվի առաջին փուլում 100, իսկ կրկնության դեպքում՝ 300 լարիի չափով:

Իրավաբանական անձանց համար պատժաչափերն ավելի բարձր են: Մասնավորապես, իրավաբանական անձն առաջին փուլում կտուգանվի 500, իսկ կրկնվելու դեպքում՝ 1 500 լարիի չափով:

Օրենքի փոփոխությամբ՝ նախարարության վերահսկողական ծառայությանը հնարավորություն կտրվի մուգ գույնի արտանետումներով մեքենաները ստուգել չորս խոշոր քաղաքներում՝ Թբիլիսիում, Բաթումիում, Քութայիսիում եւ Ռուսթավիում, համապատասխան սարքավորումների միջոցով:

...ՍԽԱԼ ԿԱՅԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի պետական բյուջեի մուտքերի մասին փաստաթղթի համաձայն, 2023 թվականի առաջին 3 ամսում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, մայրաքաղաք Թբիլիսիում, սխալ կայանելու համար, տուգանքների չափն աճել է գրեթե 300 տոկոսով:

Ըստ տվյալների՝ 2023 թվականի հունվար-մարտ ամիսներին, մայրաքաղաքում կայանման կանոնների խախտման համար, կիրառված տուգանքներից բյուջե է մուտքագրվել 3,579 մլն լարի, իսկ 2022 թվականի նույն ժամանակահատվածում՝ 1,006 մլն լարի:

Ավելացել է նաեւ գանձումներից ու տուգանքներից բյուջե մուտքագրված գումարը: Ֆինանսների նախարարության տվյալներով, այս տարվա 3 ամսում, տուգանքներից ու գանձումներից բյուջե է մուտքագրվել 83,047 մլն լարի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 55,240 մլն լարի:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ՝ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՅՈԹ ՀԱԶԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐ

Վրաստանի ներքին գործերի նախարարության տվյալներով, 2022 թվականին երկրում տեղի է ունեցել 7 517 ճանապարհատրանսպորտային պատահար, 430 մարդ զոհվել է, 5 469-ը՝ տուժել:

ՆԳՆ-ի տվյալներով, նախորդ տարում, մայրաքաղաքում տեղի է ունեցել 2 498 ճանապարհատրանսպորտային պատահար, տուժել է 3 021, զոհվել՝ 61 մարդ:

«2021 թվականի ընթացքում տեղի է ունեցել 7 705 ճանապարհատրանսպորտային պատահար (քաղաքացիական օրենսգրքի 276-րդ հոդվածի համաձայն), զոհվել է 449, տուժել՝ 5 863 մարդ: Մայրաքաղաքում գրանցվել է 3 219 դեպք, վիրավորվել՝ 2 674, մահացել՝ 56 մարդ: 2022 թվականին, նախորդ տարվա համեմատ, Թբիլիսիում ճանապարհատրանսպորտային պատահարների եւ վիրավորների թիվը նվազել է 6, իսկ մահերի թիվը՝ 8 տոկոսով»,- նշված է հրապարակված հաղորդագրության մեջ:

«Ինտերպրես» - «Վրաստան»

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼՈՐԴ ՔԱՇԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ԴՅՈՒՐԻՆ ՄԻՋՈՑ. ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՆԻՀԱՐԱՑՆՈՂ ՄԹԵՐՔՆԵՐ

Քաշի ավելացումը լուրջ հիմնախնդիր է ինչ համար՝ դժվարությամբ եմ քայլում, շունչս կտրվում է... Ոչ մի դիետայով քաշը գցել չեմ կարողանում: Չգիտեմ՝ ինչպես վարվել:
Հ.ՄԿՐՏՉՅԱՆ
Ախալցիխե

Իսկ դուք փորձե՞լ եք օգտագործել, այսպես կոչված, նիհարացնող մթերքներ: Ստորեւ առաջարկում ենք մթերքներ, որոնք կնպաստեն ավելորդ քաշից ազատվելուն:

Մասնավորապես, որոշ բանջարեղեններ բացասական կալորիականություն ունեն: Դա պայմանավորված է նրանով, որ դրանց մարսողության վրա ավելի մեծ կալորիա է ծախսվում, քան դրանք պարունակում են: Այդպիսին են վարունգը, գազարը, նեխուրը, տաքդեղը, սպանախը, սիսեռը, բրոկկոլին եւ այլն: Դրանք պարունակում են կոպիտ մանրաթելեր, որոնք լավացնում են մարսողական համակարգի աշխատանքը:

Կանաչ թեյ. նպաստում է նյութափոխանակությանը, միզամուղ է, խթանում է օրգանիզմի մաքրումը, թունավոր նյութերի հեռացումը: Անանասը նիհարեցման ամենահզոր միջոցներից է: Ցիտրուսայինները նվազեցնում են արյան մեջ ինսուլինի քանակը, ինչի հետեւանքով փակվում է ախորժակը:

Համեմունքներից կոճապղպեղը (իմբիր), դարչինը եւ ճարճատուկը (ցիկորի) նվազեցնում են արյան մեջ շաքարի քանակը:

Եվ ամենահիմնականը՝ ջուրը: Սա անփոխարինելի է ոչ միայն նիհարողների, այլեւ բոլորի համար: Խորհուրդ է տրվում սնվելուց կես ժամ առաջ խմել 1 բաժակ ջուր: Դա ակտիվացնում է մարսողական եւ նյութափոխանակության գործընթացները: Սնունդ ընդունելուց հետո՝ ջուր խմելուց պետք է խուսափել:

Նիհարացմանը նպաստում է նաեւ սպիտակուցային սնունդը՝ հավի կրծքամիսը, հնդկահավը, ձուն, ձուկը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԳՈՒՆԱՎՈՐ ԵՐԱԶ ՏԵՍՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Հաճախ, առավոտյան արթնանալիս, փորձում եմ հիշել երազը, սակայն միշտ չէ որ կարողանում եմ հիշել: Թեպետ վստահությամբ կանրող եմ ասել՝ երազս գունավո՞ր էր, թե՞ սեւ-սպիտակ: Հետաքրքիր է, գունավորությունը կապվա՞ծ է երազի բովանդակության հետ:
Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Թբիլիսի

Նախ նշենք, որ երազում մենք կարող ենք տեսնել միայն նրանց, ում ճանաչում ենք: Մարդու միտքը չի կարող նոր կերպար հորինել, ում նա իր կյանքի ընթացքում չի հանդիպել: Երազում միայն ծանոթներն են հայտնվում: Սակայն կարող են նաեւ հայտնվել այնպիսիք, ում չենք հիշում կամ մոռացել ենք: Մեր կյանքի ընթացքում մենք հսկայական թվով մարդկանց ենք հանդիպում, հարյուր-հազարավոր դեմքեր են անցնում մեր աչքի առջեւով: Այդ պատճառով՝ ուղեղի այն հատվածում, որը պատասխանատու է երազների համար, բազմազան խորհրդանիշների ու կերպարների ստեղծման համար նյութի պակաս չկա: 1915 թվականից մինչեւ 20-րդ դարի 50-ական թվականներն անցկացված փորձերը ցույց են տվել, որ մարդկանց 12 տոկոսը բացառապես սեւ ու սպիտակ երազներ էր տեսնում: 60-ական թվականներից պատկերը փոխվեց: Այսօր սեւ ու սպիտակ երազներ է տեսնում մարդկանց միայն 4,4 տոկոսը: Ավելի հավանական է, որ այդ փոփոխությունները կապված են այն հանգամանքի հետ, որ սեւ-սպիտակ ֆիլմերն իրենց տեղը զիջել են գունավորներին, ստեղծվել են գունավոր հեռուստատեսություն ու կապի այլ միջոցներ:

ԻՄԱՅԻՐ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾԻՐ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԸՆԹԵՐՑՈՂԻՑ...

Ստորեւ ներկայացնում ենք «Վրաստանի» ակտիվ ընթերցող, ախալքալաքցի Ս.Մուրադյանի սեփական փորձով ստուգված ու իրենց արդարացրած կենցաղային խորհուրդները:

❑ Որպեսզի կաթը եռալիս չթափվի, կաթսայի ներսի եզրերին պետք է կարագ կամ յուղ քսել:

❑ Բանջարեղեն խաշելիս՝ այն պետք է լցնել եռացող ջրի մեջ:

❑ Որպեսզի բազուկը շուտ եփվի, այն պետք է եռացնել 20 րոպե, այնուհետեւ՝ ջուրը թափել եւ սառը ջուր լցնել:

❑ Եթե պատահաբար ձեր ձեռքերին «Մոմենտ» սոսինձ է քսվել, ապա այն կարելի է հեռացնել մարգարինի օգնությամբ: Դրա համար պետք է սոսնձով պատված մաշկին մարգարին քսել եւ մի քանի րոպե թողնել:

❑ Եթե ցանկանում եք, որ ձեր բնակարանում հաճելի բույր տարածվի, ջրի մեջ մի քանի րոպե կիտրոնի կեղեւ եփել:

❑ Ջրի ծորակի շուրջ առաջացած նստվածքը վերացնելու համար՝ այդ հատվածը շփել տաք քացախով:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՒՍԱՓԵԼ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԻՑ

Ընտանեկան հարաբերություններն այսօր համարվում են ամենատարածված թեմաներից մեկը: Ամենօրյա ունայնության մեջ հաճախ տեղի է ունենում, որ միմյանց սիրալիր ամուսինն ու կինը չեն կարողանում գտնել հիմնականը՝ հասկանալը: Այսպիսով, հակամարտությունների մեծամասնությունը բռնկվում է ընտանիքում: Արտահայտությունը՝ «Մենք հասկանում ենք միմյանց առանց բառերի», այսօր հազվադեպ կարելի է հանդիպել: Նման խոսքեր կարելի է լսել նաեւ մեր տատիկների ու պապիկների կողմից, ովքեր կյանքի ընթացքում դժվար ժամանակներ տեսան, հատկապես նրանք, ովքեր հաջողությամբ են անցել պատերազմի ժամանակաշրջանը: Եվ երիտասարդ սերունդը, ով մշտապես շարժվում է եւ շատ հարցեր է տալիս, պետք է միայն միմյանց կցվի՝ անցնելով մի շարք ընտանեկան կոնֆլիկտներ:

Ընտանիքի հակամարտությունների պատճառները.

Գուցե սկզբի համար արժի մտածել ու գնահատել, թե ինչպիսի բախումներ են տեղի ունենում ընտանիքում: Գիտնականները պարզել են, որ ամուսինների միջեւ կոնֆլիկտային իրավիճակները կարող են առաջանալ, քանի որ կան մարդիկ, որոնք «կողիկներ» են, կամ՝ «բուռեր», եւ գուցե դուք եւ ձեր ամուսինը պարզապես պատկանում եք տարբեր կատեգորիաների: Մինչ մեկը առավոտյան արթնանում է, ուրախ վերլուծում ու հաջորդ օրն է պլանավորում, մյուսը՝ քնած եւ նույնիսկ չի մտածում, թե ինչ է կատարվելու այսօր: Բայց սա պարզապես ենթադրություն է, որը չպետք է կրճատի ընտանեկան կյանքում ծագող բոլոր խնդիրները: Գուցե դուք պարզապես ունեք կյանքի անհամատեղելի դիրքորոշումներ, օրինակ, երեխաների կրթության կամ ֆինանսական հարցերում տարաձայնություններ:

Շատերի համար պետք է ակնհայտ լինի, որ եթե ընտանիքի անդամների միջեւ հակամարտություն կա, ապա ավելի լավ

է խոսել գրագետ մարդու կամ հոգեբանի հետ, քան (ինչպես մենք ենք անում) ճշմարտության որոնման փորձով մոտենալ մերձավոր ընկերոջը: Բացի այդ, երբեւէ մտածե՞լ եք, որ երբ որեւէ բան եք հարցնում ձեր սիրելիին խորհրդատվության համար, կարող եք երբեմն նրան գայթակղել անարդար դատավճռի նրա հանդեպ, ում հետ ունեք կոնֆլիկտ:

Ընտանիքի հակամարտությունից դեպի ներդաշնակ հարաբերություններ.

Եկեք մտածենք այլ կերպ: Ի վերջո, ընտանեկան կոնֆլիկտը միշտ չէ, որ բացասական է, քանի որ այն միշտ փոփոխություններ է առաջացնում: Եվ որոշ դեպքերում նույնիսկ կարող է ծառայել որպես հակաթույն՝ ուղղված միօրինակ, ձանձրալի կյանքի դեմ:

Հոգեբանական կոնֆլիկտի դեպքում ամուսինները հաճախ սկսում են հեռանալ թեմայից: Բացահայտեք անմիջապես՝ ի՞նչ եք փորձում պարզել, եւ պարզեք այդ պահին ստեղծված իրավիճակի խնդիրը:

Մենք առաջարկում ենք, ընտանիքում հաջորդ հակամարտությունը կանխատեսելու համար մտածել, թե ի՞նչ եւ ինչպե՞ս եք խոսելու: Այնուհետեւ, զրույցը կընթանա հանգիստ, իջեցված տոնով: Սա պարզապես բացատրություն է, թե ի՞նչ կցանկանաք փոխել այս իրավիճակում, եւ ի՞նչ լուծումներ կարելի է գտնել համատեղ ջանքերով: Եվ ապագայում դուք կհասկանաք, որ ընտանիքում հակամարտությունից խուսափելու համար, շատ ավելի հեշտ է հանգիստ միջավայրում, պարզապես բացատրելով ձեր դժգոհությունը, միասին լուծել խնդիրը:

Սովորեք բացահայտ խոսել, կիսվել միմյանց հետ՝ Ձեր մտքերով, անհանգստություններով, զգացմունքներով, առօրյա իրադարձություններով: Երկրորդը. դուք պետք է կարողանաք զիջել միմյանց: Իրար նեղել՝ նշանակում է մոռանալ ամեն վատը: Սա շատ կարեւոր է ընտանեկան հարաբերություններում: Ներել ոչ միայն տվյալ իրավիճակի համար, այլ՝ ներել այն ամենը, ինչ կողակիցդ արել է ձեր համատեղ կյանքում: Միմյանց մի' հիշեցրեք անցյալի սխալները:

Սիրե'ք միմյանց, միայն սերը կարող է հարթել բոլոր փորձությունները:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

♦ Արհեստական նյութերից պատրաստված սանրերը կարող են գլխացավերի, անհանգստության, մռայլ մտքերի պատճառ դառնալ:

♦ Ուսումնասիրությունները պարզել են, որ կալցիումով հարուստ սնունդը նվազեցնում է երիկամներում քարերի առաջացման հավանականությունը: Մինչ այդ բժշկության մեջ իշխում էր հակառակ կարծիքը: Երիկամային քարերի հակում ունեցող մարդկանց խորհուրդ էին տալիս խուսափել կալցիում պարունակող մթերքներից:

♦ Խնձորի հետ կերեք նաեւ խնձորի սերմերը: Մի խնձորի սերմերի մեջ պարունակվում է յոդի 1 օրվա չափաբաժին:

♦ Գիշերը ննջարանում բաց ամանով թողնված ջուրը խմելու համար պիտանի չէ, քանի որ ջուրը կլանում է քնած մարմինների արձակած նյութերը:

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *- Կինը՝ բժշկին.*
- Բժիշկ, երբ հայելու մեջ եմ նայում, սիրտս խառնում է:
- Տիկին, դուք բացառիկ տեսողություն ունեք:

☺ *Երեխան՝ մորը.*
- Մայրիկ, երբ երգեցողություն ես պարապում, ինչո՞ւ ես կանգնում պատուհանի մոտ:
- Որպեսզի հարեւանները տեսնեն ու չմտածեն, որ ծեծում եմ:

☺ *Չորս ընկերուհի վերադառնում են հանգստավայրից.*
- Հենց տուն մտնեմ, ամուսնուս ամեն ինչ կպատմեմ,- ասաց մեկը:
- Ա՛յ քեզ համարձակություն,- ասաց երկրորդը:
- Լսիր, հիմա՞ր հո չես,- ասաց երրորդը:
- Ա՛յ քեզ հիշողություն,- մտածեց չորրորդը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

☞ Նոր ճանապարհ գտնելու համար անհրաժեշտ է հին ճանապարհից հեռանալ:

ԱՐԻՍՏՈՏԵԼ

☞ Միայն մի բան է երազանքի կատարումը խափանում՝ անհաջողության սարսափը:

ՌՈԿՖԵԼԼԵՐ

☞ Երբ մի օրը նման է լինում մյուս օրերին, մարդիկ դադարում են նկատել՝ ամեն անգամ արեւածագից հետո իրենց կյանքում տեղի ունեցող դրականը:

ՊԱՈՒԼՈ ԿՈԵԼՅՈ

☞ Եթե խոսում ես նրա մասին, որի մասին արդեն խոսել են ուրիշները, ապա պետք է փորձես գերազանցել նախորդներին:

Դ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող
Նինոծմինդա

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ՝ ՀԱՐԳԱՆՔԻ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄԻ ՕՐ

Հայ ժողովուրդը մայիսի 9-ին առանձնահատուկ խոնարհումով է նշում Հայրենական մեծ պատերազմում Հաղթանակի 78-ամյակը, Շուշիի ազատագրման եւ Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձը:

Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունն այցելեց Երեւանի «Հաղթանակ» զբոսայգի:

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, զինված ուժերի բարձրաստիճան սպայակազմը, պատերազմի վետերանները ծաղիկներ խոնարհեցին Անհայտ զինվորի հուշահամալիրի անմար կրակի մոտ՝ հարգանքի տուրք մատուցելով հայրենիքի պաշտպանության ու խաղաղության համար կյանքը զոհաբերած հերոսների հիշատակին: Ներկաները դիտեցին նաեւ ՀՀ զինված ուժերի եւ ՌԴ ռազմաբազայի զինծառայողների հանդիսավոր քայլերթը:

Հայրենական մեծ պատերազմի հերոսների սխրանքները վերհիշելու, վերարժեւորելու, վետերաններին եւս մեկ անգամ հարգանքի տուրք մատուցելու նպատակով, «Անմահ գունդ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ին, վետերանների մասնակցությամբ բազմամարդ երթ անցկացվեց դեպի «Հաղթանակ» զբոսայգու անմար կրակը:

Երթը մեկնարկեց Երեւանի Արաբկիր համայնքի Սուրբ խաչ եկեղեցուց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋ ԱՌԿԱ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՕՐԵՆՍԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

Հայաստանի Ազգային ժողովի Հայաստան-ԱՄՆ բարեկամական խմբի ղեկավար, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, բարեկամական խմբի անդամ ԱԺ պատգամավորները Վաշինգտոնում հանդիպեցին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի նախկին խոսնակ, կոնգրեսական Նենսի Փելոսիին, Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փըլլոնին, կոնգրեսականներ Ռոբ Մենենդեսին, Դեբի Դինգլին եւ Ջեն Շչեկովսկիին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի շուրջ առկա անվտանգային իրավիճակը, Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակումը, ինչպես նաեւ Ադրբեջանի հետ ընթացող խաղաղության գործընթացը, առկա մարտահրավերներն ու դրանց լուծման ուղիները:

Հայ խորհրդարանականներն ընդգծել են, որ Հայաստանը հավատարիմ է խաղաղության օրակարգին, որի նպատակը տարածաշրջանում կայուն եւ երկարատեւ խաղաղության հաստատումն է:

Ներկայացուցիչների պալատի գործընկերները վերահաստատել են իրենց պատրաստակամությունը՝ հետագայում եւս աջակցել Հայաստանին տարբեր ձեւաչափերով:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԵԿԱՄՍՅԱ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ ՉՈՐՍ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ

Մայիսի 11-ին, Հայաստանի կառավարության նիստում, երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանում ապրիլին հավաքագրվել է 297 մլրդ դրամ հարկային եկամուտ, դա պատմական ռեկորդ է Հայաստանի պատմության մեջ:

«Ապրիլին մեր հավաքագրած հարկային եկամուտի մեկ ամսվա ցուցանիշը ավելին է, քան 2000, 2001, 2002, 2003 եւ 2004 թվականների տարեկան բյուջեները եւ մոտ այնքան է, ինչքան կազմում էր 2005 թվականի տարեկան բյուջեն»,- ասաց Փաշինյանը:

ՆԵՐՔԻՆ ՊԱՐՏՔԻ ՀԱՇՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է, ԹԵՊԵՏ ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ՆՎԱԶՈՒՄ

2023 թվականի մարտի վերջի դրությամբ՝ Հայաստանի պետական պարտքը կազմել է 10 մլրդ 899 մլն դոլար: Տարեսկզբի համեմատ այն աճել է մոտ 262 մլն դոլարով կամ՝ 2,5 տոկոսով:

Հայաստանի ֆինանսների նախարարության տվյալները ցույց են տալիս, որ պարտքը շարունակում է աճել ներքին պարտքի հաշվին:

Մասնավորապես, արտաքին պետական պարտքը, մարտի վերջի դրությամբ, կազմել է 6 մլրդ 398 մլն դոլար, որը տարեսկզբի համեմատ նվազել է 47 մլն դոլարով կամ 0,7 տոկոսով:

Հակառակ դրան՝ ավելացել է ներքին պետական պարտքը: Մարտի վերջի դրությամբ այն կազմել է 4 մլրդ 501 մլն դոլար՝ տարեսկզբի համեմատ աճելով մոտ 309 մլն դոլարով կամ՝ 7,4 տոկոսով:

2022 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ՝ Հայաստանի պետական պարտքը կազմել է 10 մլրդ 638 մլն դոլար: Մեկ տարում այն աճել է 15,3 տոկոսով կամ 1 մլրդ 412 մլն դոլարով: Պետական պարտքը աճել է ներքին պարտքի հաշվին:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՎ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՅՈՒՅԱՆԻՇԸ ԳԵՐԱԶԱՆՑՎԵԼ Է

Հայաստանում, այս տարվա առաջին եռամսյակում, իրականացված շինարարության ծավալը կազմել է 64 մլրդ 827,4 մլն դրամ՝ 2022-ի նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 15,6 տոկոսով:

2023-ի հունվար-մարտին, պետական բյուջեի միջոցների հաշվին, իրականացվել է 7 մլրդ 686,6 մլն դրամի շինարարություն (ընդհանուր շինարարության 11,8 տոկոսը), որից 2 մլրդ 415,8 մլն դրամը՝ միջազգային վարկերի հաշվին: Ընդհանուր առմամբ, 2022-ի նույն ժամանակահատվածի համեմատ, այս տարի պետբյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալը նվազել է 37,8 տոկոսով:

Համայնքների միջոցներով իրականացվել է ընդհանուր շինարարության 3,4 տոկոսը՝ 2 մլրդ 200,5 մլն դրամի, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճը 93,4 տոկոս է:

Մարդասիրական օգնության միջոցների հաշվին իրականացվել է ընդհանուր շինարարության 0,9 տոկոսը՝ 563,3 մլն դրամի: Իսկ կազմակերպությունների միջոցներով իրականացվել է 37 մլրդ 155,3 մլն դրամի շինարարություն, սա կազմել է ընդհանուր շինարարության 57,3 տոկոսը, դրանից՝ 1 մլրդ 254,3 հազար դրամի շինարարություն իրականացվել է օտարերկրյա ներդրողների միջոցների հաշվին, իսկ բնակչության միջոցների հաշվին՝ 17 մլրդ 221,7 մլն դրամի:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄԵՆԱԱՆՇՈՒՔ ԶՈՐԱՀԱՆԴԵՍԻՆ

Մայիսի 9-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՌԴ նախագահի հրավերով, Մոսկվայում Վլադիմիր Պուտինի եւ ԱՊՀ մի շարք երկրների առաջնորդների հետ, ծաղիկներ խոնարհեց Անհայտ զինվորի գերեզմանին, մասնակցեց Հայրենական մեծ պատերազմի Հաղթանակին նվիրված միջոցառումներին:

Մինչ այդ, Հայաստանի վարչապետը, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի եւ Ուզբեկստանի ղեկավարների հետ, Կարմիր հրապարակում դիտել է տոնական քայլերթը: Նշենք, որ մայիսի 9-ին, Մոսկվայում ֆաշիզմի դեմ Հաղթանակի 78-րդ տարեդարձի առթիվ անցկացված զորահանդեսը վերջին տարիների եւ, ընդհանրապես, 1945 թվականի մայիսի 9-ից անցկացված զորահանդեսների պատմության մեջ, ամենաանշուքն էր ու կարճամկետը: Զորահանդեսին չներկայացվեցին ռազմական ավիացիան եւ նորագույն ծանր զրահատեխնիկան, չանցկացվեց «ավանդական անմահների գնդի» երթը: Նշանակալիորեն նվազել էր նաեւ զորահանդեսի մասնակիցների թիվը:

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԸ ՄԻԱՑՎԱՎ Գ.ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ

«Գոյ» թատրոնը միացվեց Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին:

«Բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոնի թատերախումբը Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի կազմ ընդգրկելու արդյունքում՝ կլրացվեն ֆինանսական եւ ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների թերացումները, կտրամադրվեն ստեղծագործական առավել բարենպաստ պայմաններ, կմշակվի գովազդատեղեկատվական արշավի ծրագիր եւ կբարձրացվի թատերախմբի հանրային ճանաչելիության մակարդակը: Միասնական կառավարման դեպքում կբարձրանա նաեւ ֆինանսական, գույքային եւ կադրային կառավարման արդյունավետությունը»,- նշված է երկրի կառավարության որոշման հիմնավորման մեջ:

ՀԱՅ ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐԻ ՖԻԼՄԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Ռեժիսոր Արա Մնացականյանի «Ամերիկայի բարի սամարացիները» կինոնկարը «Ֆիլմի լավագույն երաժշտություն» (Արտաշես Քարթալյան) եւ «Ֆիլմի լավագույն պրոդյուսեր» (Մանվել Սարիբեկյան) մրցանակներին է արժանացել Թուրքիայի Անատոլիական միջազգային կինոփառատոնում (International Anatolian Film Awards (AFA):

Ֆիլմում ներկայացված են հայ, ասորի եւ հույն ժողովուրդների ցեղասպանության ականատեսների վկայագրությունների եւ հուշագրությունների փաստագրություններ: Ֆիլմը նաեւ այլ թուրքական կինոփառատոնների մրցութային ծրագրերում է ընդգրկվել, սակայն արդյունքները դեռ չեն հրապարակվել: Ֆիլմի սցենարիստն Ամբեր Կարլինսն է (ԱՄՆ), պրոդյուսերը՝ Մանվել Սարիբեկյանը, օպերատորն Աշոտ Մկրտչյանն է, իսկ արտադրողը՝ «Ման փիքչերս փրոդաքշեն» ընկերությունը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍ

18.05.2023 Հիսուս Քրիստոսի Համբարձման տոն

Տոնը նշվում է Քրիստոսի Հարության 40-րդ օրը, 35 օրվա շարժունակությամբ՝ ապրիլի 30-ից մինչեւ հունիսի 3-ը՝ հինգշաբթի: Հարությունից հետո՝ Քրիստոս 40 օր մնում է երկրի վրա եւ երեւում Իր աշակերտներին, պատգամներ տալիս առաքյալներին, որից հետո՝ համբարձվում երկինք:

Հայ Առաքելական Եկեղեցում մայիսի 18-ը հիշատակվում է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու օր:

Տոնի ժամանակ ամենուրեք կատարվում է վիճակահանություն եւ պարզվում, թե տվյալ տարում որ աղջիկն է ամուսնանալու: Տոնի օրը ջրով լի կժերի մեջ գցում են ծաղիկների տերեւներ եւ աղջիկներին պատկանող զանազան իրեր: Այնուհետեւ դեռահաս մի աղջիկ կժից հանում է իրերը, որոնց պատկանող անձանց խրատներ ու բարեմաղթանքներ են տրվում:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ԱՎԵԼԻ ՔԱՆ 155 ՀԱԶԱՐ ՏՈՒԳԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ՈՒՂԵՎԱՐՁԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

2022 թվականի փետրվարի 1-ից մինչեւ 2023 թվականի ապրիլի 24-ն ընկած ժամանակահատվածում, քաղաքային տրանսպորտի բոլոր երեք տեսակներով՝ մետրո, միկրոավտոբուս եւ ավտոբուս, առանց ուղեվարձի երթեւեկելու համար, սահմանվել է ընդհանուր առմամբ՝ 155 հազար 556 տուգանք:

Թբիլիսիի տրանսպորտային ընկերությունից հայտնել են, որ տուգանքի չափը կազմում է 3 մլն 111 հազար 120 լարի:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականին սահմանվել է ընդհանուր առմամբ՝ 105 հազար 692, իսկ 2023 թվականի առաջին չորս ամսում արդեն իսկ, սահմանվել է 49 հազար 864 տուգանք:

2022 թվականի ամենաշատ տուգանքը՝ 64 հազար 850, սահմանվել է ավտոբուսով, իսկ ամենաքիչը՝ 10 հազար 650, մետրոյով առանց ուղեվարձի երթեւեկելու համար: 2022-ին, միկրոավտոբուսով առանց ուղեվարձի երթեւեկելու համար, 30 հազար 192 տուգանք է նշանակվել:

2023 թվականին ամենաշատ տուգանքը՝ 25 հազար 144, սահմանվել է ավտոբուսով, ամենաքիչը՝ 867, մետրոյով առանց ուղեվարձի երթեւեկելու համար: Միկրոավտոբուսով առանց ուղեվարձի երթեւեկելու համար՝ սահմանվել է 23 հազար 853 տուգանք:

Հիշեցնենք՝ Թբիլիսիում 20 լարի տուգանք է կիրառվում քաղաքային տրանսպորտով, մասնավորապես՝ ավտոբուսով առանց ուղեվարձը վճարելու երթեւեկելու համար. 30 օրվա ընթացքում չվճարելու դեպքում տուգանքը կրկնապատկվում է՝ հասնելով 40 լարիի:

ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2023

ՄԵՐ ԻՌՈՒ ԽԵՉԱՆՈՎԱՆ, ՑԱՎՈՔ, ՉԱՆՑԱՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԷԼԵՆ ԵՐԵՄՅԱՆԸ (ԲՐՅՈՒՆԵՏԸ) «ԵՎՐԱՏԵՍԻԼԻ» ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ Է



Իռու Խեչանովա

Մայիսի 11-ին Մեծ Բրիտանիայի Լիվերպուլ քաղաքում կայացավ երգի ամենահեղինակավոր փառատոնմրցույթներից մեկի կիսաեզրափակիչ փուլը: Արդյունքում, հայտնի դարձան «Եվրատեսիլ-2023»-ի եզրափակչին մասնակից 15 երկրների ներկայացուցիչները:



Բրյունետ

Ցավոք, երկրորդ կիսաեզրափակչում Վրաստանը ներկայացնող Իռու Խեչանովան, ECHO երգով, դուրս մնաց:

Իսկ Հայաստանի պատվիրակ Բրյունետը հաղթահարեց «Եվրատեսիլ-2023» մրցույթի կիսաեզրափակիչ փուլը եւ դուրս եկավ եզրափակիչ, որտեղ հանդես կգա 17-րդ համարի ներքո: Բրյունետի հետ միասին, եզրափակչի ուղեգիր նվաճեցին նաեւ Ալբանիայի, Կիպրոսի, Էստոնիայի, Բելգիայի, Ավստրիայի, Լիտվայի, Լեհաստանի, Ավստրալիայի եւ Սլովենիայի ներկայացուցիչները: Մրցույթի ավանդական կանոնակարգի համաձայն՝ Մեծ հնգյակի երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, ինչպես նաեւ նախորդ տարվա հաղթող Ուկրաինայի ներկայացուցիչներն առանց մրցույթի անցել են եզրափակիչ:

Հիշեցնենք, որ «Եվրատեսիլ-2023»-ի եզրափակիչը կանցկացվի այսօր՝ մայիսի 13-ին:

ՍՊՈՐՏ

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ. ՎՐԱՍՏԱՆՑԻ ԵՐԵՔ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԵՐԿՈՒ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼՆԵՐԸ

Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում շարունակվում է բռնցքամարտի աշխարհի առաջնությունը: Արդեն հայտնի են մրցաշարի կիսաեզրափակիչ փուլի մասնակիցները, ովքեր արդեն ապահովել են բրոնզե մեդալներ՝ վրաստանցիներ Սահիլ Ալահվերդովը (48 կգ քաշային կարգ), Լաշա Գուրուլին (67կգ) եւ Գիորգի Ղուշիտաշվիլին (86կգ):

Այդ արժողության մեդալ ապահովել են նաեւ Հայաստանի հավաքականի անդամներ, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Հովհաննես Բաչկովը (63,5 կգ) եւ Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր Նարեկ Մանասյանը (92կգ):

ՁԵՌՔԻ ԳՆԴԱԿ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆՎԱՃԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳԻՐ

Վրաստանի հանդբոլի հավաքականը՝ Եվրոպայի առաջնության ընտրական փուլի վերջին հանդիպումն անցկացրեց Հունգարիայի հետ եւ հաղթեց 31:30 հաշվով:

Վրաստանի հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական փուլի լավագույն՝ 4-րդ տեղը զբաղեցրածների թվում է եւ պատմության մեջ առաջին անգամ հանդես կգա մայրցամաքի առաջնությունում:

Եվրոպայի առաջնությունը կանցկացվի Գերմանիայում, 2024 թվականի հունվարի 10-28-ը: Ըստ վիճակահանության՝ Վրաստանի հավաքականը «Ե» խմբում է: Նրա մրցակիցներն են Շվեդիայի, Նիդերլանդների ու Բոսնիայի հավաքականները:

«Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը իրենց վշտակցությունն են հայտնում ճանաչված նկարիչ Թենգիզ Միկոյանցին, սիրելի մոր՝ 80-ամյա

Ասյա Հրաչիկի ՄԻԿՈՅԱՆՑԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին, բարեկամներին ու մերձավորներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Առողջարան Հայաստանում: 9.Մոմի շերտով պատել: 10.Հայ վաճառական 16-18-րդ դարերում: 11.Քաղաք Ավստրիայում: 13.Մեկի՝ մի բանի օգտին: 16.Որեւէ գաղափար կամ միտք գրավոր եղանակով փոխանցելու համար: 17.Ամբողջի հատված՝ բաժին: 19.Սրտխառնոց: 22.Աշխարհի ամենանշանակալի արվեստի թանգարաններից (Մադրիդ, Իսպանիա): 24.Կղզի Ճապոնիայում: 25.Տեղին է, վայել է: 27.Ե'վ գողանալ, ե'ւ գժվել: 29.Հսկա, մեծ: 32.Անապատ Հարավային Ամերիկայում: 33.Չմշակված ադամանդ: 35.Նարդի: 37.Ողջ, կենդանի: 39.Բուլղարացի կույր պայծառատես: 40.Ռուս պոետ ... Անֆիլով: 43.ՀՀ ժողովրդական արտիստ ... Երիցյան: 44.Բարձրաստիճան զինվորական եւ քաղաքացիական պաշտոնյաների տիտղոս սուլթանական Թուրքիայում: 47.Անգլիացի կին մաթեմատիկոս ... Լավլեյս: 49.ՀՀ եւ ՌԴ վաստակավոր նկարիչ ... Խաչատրյան: 50.Ֆիլտր: 53.XX դարի հայտնի վրացի նկարիչ ... Փիրոսմանի: 54.Լացող ծառ: 55.Սուր, լավ կտրող: 57.Ոգելից խմիչք: 58.Խթան, շարժառիթ:

ՈՒՂՂԱՁԱՅԱՅ. 1.Ճանկ, մագիլ: 2.Հնչերանգ, ենթածայն: 3.Ընդհարում: 4.Մինչեւ մահ: 5.Մթնոլորտի խիստ աղտոտվածությունը արդյունաբերական արտանետվածքներով: 6.Նիհար: 8.Ծառա: 12.Իտալացի կինոռեժիսոր եւ կինոդերասան Վիտտորիո դե ...: 14.Քաղաք Ռուսաստանում: 15.Շումերի հնագույն քաղաքներից: 18.Ձկան ընդերքով եւ աղաջրով պատրաստվող համեմունք: 19.Կատվի ձագ: 20.Խարդախ, նենգ: 21.Կատալոնական թատրոնի եւ կինոյի դերասանուհի Սիլվիա ...: 23.Կամաց, անշտապ: 26.Գծուծ: 28.Գնացքի գծեր: 29.Շինանյութ: 30.Պետություն Աֆրիկայում: 31.Ծաղկի տեսակ: 34.Խորհրդային բանաստեղծ, մանկագիր Սամուիլ ...: 36.Հոնկոնգցի դերասան, երգիչ Ալան ...: 38.Դիզայնի պատվավոր մրցանակ ... Դոթ: 41.Լարվածություն, պրկում: 42.Վրաստանում գործող բանկ: 45.Ամերիկացի կոմիկ, դերասան ... Անսարի: 46.Մսուր, գոմ: 48.Նոճազգիների ընտանիքի մշտականաչ թփերի կամ ծառերի ցեղ: 51.Սոճի (ժող.): 52.Էտապ: 56.Տուպոլեւի ինքնաթիռը:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Փարաջանով: 5.Ռուզան: 8.Արտասովոր: 10.Սյուն: 11.Իբր: 12.Պրիզ: 13.Իսկ: 15.Տրե: 16.Անի: 22.Լիբանան: 24.Այբ: 25.Ունդ: 26.Ազատ: 27.Ալ: 28.Լաո: 30.Ամիս: 32.Գրական: 34.Հաագա: 37.Որ: 38.Եկ: 39.Առ: 40.Անդուր: 42.Աստառ: 44.Լա: 45.Շիա: 46.Արազ: 48.Ենք: 50.Հրաչ: 52.Շեկո: 53.Գերեցիր: 54.Իմաստ: 55.Սի: 56.Կատար:

ՈՒՂՂԱՁԱՅԱՅ. 1.Փիրոսմանի: 2.Աղավնի: 3.Աստղիկ: 4.Որսորդ: 6.Արարիչ: 7.Ավարտ: 9.Ռոպե: 14.Սալբի: 17.Իտալիա: 18.Աբուլ: 19.Անդորր: 20.Բիզոն: 21.Բատրակ: 23.Անագ: 27.Ամառ: 29.Ակոս: 30.Ահաբեկիչ: 31.Սգալ: 33.Արտաշես: 35.Անահիտ: 36.Շուշանիկ: 38.Եռակի: 41.Ռիչ: 43.Արեցիր: 47.Ձորի: 49.Քնար: 51.Սեդա:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՈ ՄՈՆԱՅԱՐՏՈՒ: ՏԱԲԼԻՍԻ 0105, Գ.ԱՅՈՎՅԵԼԻՍ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աքոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎԱՀԱՐՏՅԵԼՈՎ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445